

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ

ՎԱԳԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր [այսուհետև՝ ՄՄԶ] № 3110-ը ի թիվս Մխիթար Սեբաստացու «Ճարտասանութիւն» [էջ 2ա—73բ] և Մատթեոս վարդապետի [Մատթեոս Մխիթարյան] «Հաւաքումն բառից, որք նշանակութեամբ նոյն կամ մերձատրք են» [էջ 75ա-112ա] գործերի ամփոփում է մեկ այլ հետաքրքրական բառարան [էջ 113ա-146բ]։

Հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններում սույն ձեռագիր բառարանի մասին, թերևս օրյեկտիվ պատճառներով, ոչինչ չի ասված¹։

Ձեռագիր այդ բառարանը մասնագիտորեն մեկնաբանվում է Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» գրքում², «Բառարանագրական նյութեր» բառահոդվածի № 45-47-ում։ Ըստ որում, ինչպես նկատելի է համարակալումից, այն ներկայացվում է երեք առանձին մասերով։ Վերջիններս բերվում են իրենց վերնագրերով և համապատասխան օրինակներով։ Այնուհետև, նշվում է, թե այդ «նյութերը» որտեղ են պահպանվում և ինչ բնույթի են։ Տեղեկացվում է նաև, որ բացի ՄՄԶ-ի ֆոնդերից հիշյալ բառարանը տեղ է գտել նաև Երուսաղեմի հայկական մատենագիտական ձեռագրաֆոնդում [№ 1038, էջ 281-322, 325-360 և 363-377]։ Բառարանի հիշյալ երեք մասերից միայն առաջինն է, որ ինչ-որ չափով բնութագրվում է։ Հ. Անասյանը նշում է հետևյալը. «[Հեղինակը -Վ. Հ.] տալիս է, այբբենական կարգով, բաղադրյալ բառերի առաջին մասերը։ Ընդգրկված են նաև որոշ թվով նախածանցներ՝ «Ան՝ աճալցելու, աճալքալ...» կամ «Ապ՝ ապարդիւն, ապածոյծ... ևն»³։ Դժվար չէ նկատել, որ սա սոսկ բանասիրական-մատենագիտական դնահատություն է։

Մատենադարանի «Յուցակ ձեռագրաց»-ի հեղինակները հիշյալ ձեռագրի բովանդակությունը լրացնելիս նշում են հետևյալը. «Մխ. Սեբաստացույ ճարտասանութիւն։ Մատթէոսի վրդ.-ի Բառգիրք հոմանիշ բառից։ Յանգարան»⁴։ Այստեղ «Յանգարան» ասելով, հավանաբար, նկատի է առնված էջ 113ա-146բ-ում զետեղված «նյութերը», որովհետև դրան անմիջաբար նախորդողը բերվում է իբրև Մատթեոս վարդապետի գործ։ Դա հիմնավորվում է նաև «Յուցակ ձեռագրաց»-ի վերջում բերվող տվյալներով, որտեղ անձնանունների ցանկում⁵ «Մատթէոս վրդ., Մխիթարեան, 1731-ից առաջ, բառարանագիր» նշումից հետո հիշվում է նաև ՄՄԶ № 3110-ը։ Այս վերջինը, բնականաբար, հիշվում է ոչ թե «Յանգարանի», այլ, կրկնում ենք, «Մատթէոսի վրդ.-ի Բառգիրք հոմանիշ բառից»-ի ծանուցման նպատակով։ Որ դա այդպես է, հիմնավորվում է նաև ճիշտ հակադարձորեն։ ՄՄԶ № 566, 775 և 873-ում, դատելով ձեռագրացուցակը կաղմողների ընձեռած տվյալներով, ի շարս այլ գործերի, հիշատակվում է «Մատթէոսի վրդ.-ի Բառագիրք նոյնանշանք»-ը. այսինքն՝ այդ ձեռագրերում բացակայում է «Յանգարան»-ը։ Եվ ստացվում է այնպես, որ «Յուցակ ձեռագրաց»-ի հեղինակների նշած «Յանգարան»-ը,

¹ Տե՛ս Հ. Մ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V—XV դդ.), Երևան, 1966, ն ու չ է Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (XVI—XVII դդ.), Երևան, 1971, Գ. Կ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1967։

² Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976։

³ Նույն տեղում, էջ 1197։

⁴ Տե՛ս «Յուցակ ձեռագրաց», հ. Ա, Երևան, 1965, էջ 1523։

⁵ Նույն տեղում, № 17։

որ առկա է ՄՄՁ № 3110-ում, այլ բան չէ, քան 2. Անասյանի գրքում № 45-47-ի տակ իբրև «նյութեր» բերվող բառարանը⁶ «Ցուցակ ձևագրաց»-ի հեղինակները բանասիրորեն լիովին յորավունք ունեն այդ «նյութերը» հանգարան կոչելու, որովհետև գրանցում առերևույթ գործ ունենք այնպիսի բառային բաղադրությունների հետ, որոնք կազմված են կրկնվող այս կամ այն բաղադրչի հիման վրա: Այդ բաղադրիչները կարող են լինել անկախ բառեր, բառ կամ բայարմատներ. տարբեր կարգի ածանցներ: Դրանք իբրև բաղադրող կամ բաղադրվող հիմքեր ամեն դեպքում սերում են նոր բառեր: Բաղադրյալ բառերում այս կամ այն բաղադրիչի միակար կրկնությունը կարող է բնագրի առումով արտասովոր դիտվել, և նման տեսքով երևան եկած ձևագիր «նյութերը» թերևս առաջին հայացքից կարելի է «Ցանգարան» համարել: Սակայն ամբողջ հարցն այն է, որ տվյալ դեպքում ի տես գործ ունենք յուրօրինակ տիպի բառարանի հետ:

Եվ 2. Անասյանը, և «Ցուցակ ձևագրաց»-ը կազմողները ՄՄՁ № 3110-ը համեմատելու թվագրում են իբրև ԺԸ դ. գրչություն: Լրացուցիչ տվյալների փացակալության պայմաններում առայժմ որևէ առարկություն չի կարող լինել, պիտի լիովին համաձայնել նման թվագրմանը:

Ն. Պողարյանի «Մայր ցուցակ ձևագրաց Սրբոց Յանոսեանց»-ի⁷ [այսուհետև՝ ԵՄՁ] № 1038-ում [էջ 54, սյունակ 2], որի մասին տեղեկացնում է նաև 2. Անասյանը իր գրքում, բերվում է հիշյալ բառարանի մատենագիտական նկարագրությունը, ըստ որում նկատելի է դառնում ոչ միայն նրա բառակազմարի ընդգրկման բնույթը, այլև հարազատորեն նմանվելը ՄՄՁ № 3110-ին: Այսպես, նույն են բառարանի 1-III մասերի վերնագրերը և դրանց կից անմիջաբար տրվող նմուշ-օրինակները: Հմ.մտ. ԵՄՁ, էջ 54, սյունակ 2, վ. 4-8 և ՄՄՁ № 3110, էջ 113ա, վ. 1—6, ԵՄՁ, էջ 54, վ. 11—15 և ՄՄՁ № 3110, էջ 127ա, վ. 1-3, ԵՄՁ, էջ 54, ն. 15-18 և ՄՄՁ № 3110, էջ 140ր, վ. 134 և այլն⁸:

Այսպիսով, ձևագիր բառարանի մասին առայժմ կան միայն բանասիրական մատենագիտական տեղեկություններ: Դրանք լիովին բավարար են և հիմք են հանդիսանում հիշյալ ձևագիր «նյութերը» լեզվաբանական-բառաբանագրական հայեցակետից գնահատելու համար: Նման քննությունը անհրաժեշտ է ոչ միայն կոնկրետ հալ բառարանագրության, այլև առհասարակ հայտը լեզվի պատմության տեսակետից: Նման կարգի նյութերի վերլուծությունն ու քննությունը կարող են յուրովսանն նպաստել հայերենագիտության զարգացմանը արդի պայմաններում:

Սույն ձևագիր բառարանն այստեղ ուղադրության առարկա է ամենից առաջ իր բնույթի [բառարանագրական տիպի] և կառուցվածքի տեսակետից: Մանրթանալով բառարանին ըստ ամենայնի, նկատելի է, որ այն կառուցված է բառակազմական սկզբունքով, այսինքն՝ գործ ունենք գրաբար բառակազմական բառարանի հետ: Իբրև բառահոգված ընտրվում է այս կամ այն պարզ կազմության բառը, բառարմատը կամ ածանցը և դրանց [իբրև բաղադրվող հիմքի] հիման վրա առանձին բաժիններում բաղադրվում են բարդ և ածանցավոր բառեր:

Բառարանի հեղինակը սկզբունքորեն առանձնացնում է հինգ մաս⁹. դրանք տրվում են առանձին վերնագրերով: Այսպես, I մաս՝ «Մասնկունք բաղադրականք, եւ սկսբնատառք [փխ. Գ-Վ. 2.] բաղադրելիաց բազումք» [էջ 113ա-127ա], II մաս՝ «Վերջաբառք բաղադրեալ բառից, բաժանեալք ըստ

⁶ 2. Անասյան, նշվ. աշխ., էջ 1197—1198: Ի դեպ, 2. Անասյանը նույն տեղում, հաջորդ՝ № 48-ում, առանձին հիշում է Մատթեոս Մխիթարյանի (Մատթեոս վարդապետի) համապատասխան երկը և նախապատրաստում այն մատենագիտորեն հեղինակի անվան հետ կապված բառահոգվածով մեկնաբանելուն:

⁷ Ն. Պողարյան, Մայր ցուցակ ձևագրաց Սրբոց Հակոբյանց, հ. 4, Երուսաղեմ, 1969: ԵՄՁ № 3110-ի էջ 140, վ. 2-ում գրված «և եզերինք»-ը 2. Անասյանի գրքում (էջ 1197, ն. 2) վրիպակով տպագրված է «տեղերինք»: Նման բառաձևը անհարկ է սույն գրաբար բնագրին:

⁹ 2. Անասյանն իր գրքում վերջին երկու մասերը չի առանձնացնում (էջ 1197—1198), իսկ Ն. Պողարյանը առանձնացնում է (էջ 54, ն. 3—8):

ձայնաւոր տառիցն, որք ի վերջին վանկս նոցա» [էջ 127ր-140ա], III մաս՝ «Ածանցականաց անուանց վերջք. ըստ զանազան ձայնաւորաց տառից, որք ի նոսա են և եղերին բաժանմամբ՝ եզան ի մի վայր» [էջ 140ր-145ա], IV մաս՝ «Վերջք ածանցականաց, որք երբեմն զգորութիւնս նշանակելոյ ունին իբր զընդունելութեանց, որք ի օղ [ընդգծումը մերն է— Վ. Հ.] եղերին» [էջ 146ա—146բ] և V մաս՝ «Վերջք ածանցականաց, որք երբեմն զգորութիւն նշանակելոց ունին զբայածականս, որք ի ումն [ընդգծումը մերն է— Վ. Հ.] եղերին» [էջ 146բ]: Ըստ այդմ գծվար չէ վերստին համոզվել, որ բառարանի I-II մասերում [չբահշխատ վրիպումները և շեղումները ընդհանուր սկզբունքից] բաղադրվող հիմքերով սերվում են բարդ, իսկ III-V մասերում՝ ածանցավոր բառեր: Համարաբար ծավալուն են բառարանի I և II մասերը: Այսպես, I մասն ընդգրկում է 302 բառահոգված: Ամենափոքր բառահոգվածը ներկայացնում է մեկ բաղադրություն: Հմմտ. գայլ ~ գայլաբարոյ, դար ~ դարահոս, է ~ էախնդիր, լուրջ ~ լուրջաբար, խորդ ~ խորդաբարոյ և այլն: Բառարանի այս մասում ամենաշատը աստուած [24], ինքն [23] և այլ բաղադրվող հիմքերով բարդություններն են [աստուծաբարո, աստուծակիր, աստուծամեծ, աստուծամեծաբան և այլն, ինքնիշխան, ինքնահաւան, ինքնակործան, ինքնագոր և այլն]: Բառաբարդմամբ բաղադրություններ են ամփոփված նաև բառարանի II մասում, որտեղ ի տարբերություն I-ի, բառաբարդումը հիմնականում տեղի է ունենում բայարմատ բաղադրվող հիմք-գլխաբառով: Հմմտ. ասաց ~ յատարկասաց, խաղասաց, երգասաց, ժամասաց, այրեաց ~ կիսայրեաց, հրայրեաց, բաց ~ արատաբաց, բերանաբաց և այլն:

Բառարանում ածանցումներին նվիրված երեք մասերից համեմատաբար հարուստ է I-ը [ընդհանուր մասերից III-ը], որը ստուգապես պարունակում է 102 ածանցներով [և սխալմամբ այդպիսին դիտվող այլ կարգի մասնիկներով] բաղադրված բառեր: Ընդ որում մեծ թիվ են կազմում —ակ [21], —ակուն [18], —ան [11], —արան [13], —իկ [24], —ոտ [15], —որդ [16], —ու [18] և այլ ածանց-բաղադրվող հիմքերով կազմությունները: Երեք մասերից II-ը պարունակում է 22 վերջածանցներով [որոնք համարժեք են —օղ մասնիկին] հիմնականում մեկական բաղադրություններ. երկուական ունեն՝ —ակ, —իկ, —ուլ, ուտ, —իչ ածանցները, իսկ մյուս՝ 17 նման արժեքով ածանցներն են՝ —ական, —ան, —անք, —ատ, —արան, —աց, —բալ [~խաբարալ], —եայ, —եաց, —կան, աւոր, —ոտ, —որդ, —ու, —ուկ, —ուն և —ոյց [~նաւակաւոյց]: Երեք մասերից III-ը ընդգրկում է 9 վերջածանցներով [—ումն-ի արժեքով], բացառությամբ մեկի՝ —ած, մեկական բաղադրություններ [մյուս ածանցներն են՝ —ան, —ուած, —իւն, —մեկ, —ունդ, —ունք, —ուրդ, —ուց (~ուռուց)]:

Բառարանում մեկ գլխաբառ-բաղադրվող հիմքով սերվող բաղադրությունների միջին հաճախականությունը կազմում է 5-6 բառ: Սա պակաս ցուցանիշ չէ նման ծավալի մի ինքնատիպ, յուրօրինակ բառարանի համար:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գլխաբառի [բաղադրվող հիմքի] և դրանից սերված բառերի ընտրության ու թվարկման, ստորակարգման ու դասակարգման հետ կապված հարցերին:

Բաղադրվող հիմք հանդիսացող գլխաբառերը բառարանում ընտրված են կամայականորեն, թեև դրանց զգալի մասը գրաբարի բառապաշարի առավել կենսունակ և գործածական միավորներ են: Այդ իրողությունը առավել ցայտուն կերպով նկատելի է ածանցների ընտրության դեպքում: Ածանցները, իբրև բաղադրվող հիմքեր, ընդգրկվում են անխտիր, ընդ որում երբեմն դրանցից մի քանիսը գլխաբառ է դառնում բառարանի տարբեր մասերում: Այնուհետև, գլխաբառերը կազմված են կոպիտ այբբենական եղանակով, այսինքն՝ այբբենական կարգը վերաբերում է միայն բաղադրվող հիմք-գլխաբառի սկզբընատառին, իսկ 2-րդ, 3-րդ և հաջորդ տառերի դեպքում ստորակարգումը խախտված է: Բառարանի II մասում գլխաբառերի այբբենական հերթականությունը մի քանի անգամ փոփոխվում է: Հմմտ. Ա-Ք [էջ 127բ-132բ], Ա-Տ [էջ 132բ-133բ], խառն [էջ 134ա-բ], Ա-Տ [որոշ տառերի բացթողումով՝ էջ 134բ-137ա], Ա-Փ [որոշ բացթողումով՝ էջ 137բ-138բ], Ա-Փ [խառն, մեշընդմեշ, որոշ տառերի բացթողումով՝ էջ 138բ-140ա]: Գիտական բառա-

րանագրության տեսակետից նման կազմությունը բավականին խոցելի է. դա կոնկրետ դեպքում կարելի է բացատրել ոչ այնքան հեղինակի համապատասխան փորձի պակասով, որքան բառարանը ոչ վերջնական տեսքի բերված լինելու հանդամանքով:

Խախտումներ կան նաև ղլխաբառերի ընտրության, ըստ բառակազմական տիպերի դասակարգման, ղլխաբառերից սերվող բառերի այբբենական թվարկման և այլ հարցերում: Ստորև բերենք հիշյալ հարցերին վերաբերող առավել աչքի ընկնող և բառարանագրության սկզբունքների տեսակետից հատկանշական խախտումները:

ա) Բառարանի I մասում իբրև ղլխաբառ գրված են նաև մի քանի նախածանցներ այն դեպքում, երբ այդ մասում բուն սկզբունքը արմատական բառերով, հիմնականում անկախ բառերով նոր բաղադրություններ սերելն է¹⁰: Հանդիպում են հետևյալ նախածանցներով բաղադրություններ՝ աճ~ աճայցելու, աճայթագ, աճատացուցիւն, աճիւն, աճատած [չտաժ-վ. Հ.], աճ-ժամ... աճատեկեցաղ¹¹, աճաբև և այլն [էջ 113ա], ապ~ ապարդիւն, ապարան, ապատեմն [ն. տ.], դեբ~ գերաշխարհիկ, գերմաստ, գերամբարձ և այլն [էջ 115բ], դժ~ դժկամակ [էջ 116ա], ճամ~ ճամաշխարհիկ, ճամատարած, ճամագդի և այլն [էջ 120ա], յար~ յարանու, յարագրեալ, յարաբարա և այլն [էջ 123ա], ճախ~ ճախաշարիդ, ճախակապուտ, ճախավախճան և այլն [էջ 123ա]. շար~ շարառութիւն [էջ 123բ]:

բ) Այդ նույն մասում, անուշադրաբար, երբեմն բաղադրվող հիմքը կրկնվում է ղլխաբառերի տեղադրման ընթացքում, ըստ որում յուրաքանչյուր դեպքում մեջտեղ են բերվում այլ բաղադրություններ: Հմմտ. յորդ~ յորդառա, յորդանոսան, յորդախաղաց [էջ 123ա, վ. 2] և [բիշ հետո] յորդ~ յորդախոս, յորդանոս [էջ 123ա, վ. 5]:

գ) Անհուհետ, բառարանի այդ մասում, որտեղ, ինչպես գիտենք, առհասարակ ղլխաբառ են դիտվում ինքնուրույն բառային միավորները [անկախ բառերը], հանդիպում է նաև բայարմատի գործածություն: Այսպես, ապակալե-ղիտվել է իբրև այդպիսին, թեև այն բայարմատ է [հմմտ. ապակալե-ել~ ապակալանում, ապակալութիւն և այլն]. այստեղ ապակալ բաղադրվող հիմքով են սերված՝ ապակալագործ, ապակալաբոյս, ապակալաբեր [էջ 114ա]: Նման խախտումն այս բառարանում շատ աննշան երևույթ է, նկատվում է հազվադեպ:

դ) Կոպիտ այբբենական սկզբունքով են ներմուծվում նաև տվյալ բաղադրվող հիմքից սերվող բաղադրությունները. այստեղ կարելի է ասել, որ հեղինակը ի հայտ է բերել բառակազմական ներգագայական [ինտուիտիվ] մոտեցում, այսինքն՝ ընտրված ղլխաբառից անմիջապես հետո բերվում են բաղադրյալ բառերը այն հերթականությամբ, որով հեղինակը անմիջապես մտաբերել է: Սա ընդհանուր երևույթ է և վերաբերում է բառարանի բոլոր մասերում տեղ գտած գրեթե յուրաքանչյուր ղլխաբառից սերվող բաղադրությունների հերթականությանը: Հմմտ. ծիրանի~ ծիրանափայլ, ծիրանածայր, ծիրանածալալ, ծիրանավաճառ, ծիրանածուէն [էջ 119ա], երանգ~ երփներանգ, ծաղկեբանգ, յոգներանդ, աբիներանգ, գունեբանգ [էջ 128ա], -աւէտ~ ծաղկաւէտ, փրկաւէտ, ընշաւէտ, պաղաւէտ, շանաւէտ, կենսաւէտ, երանաւէտ [էջ 142ա], -ակ~ ճախանգակ, խնդրակ [էջ 146ա], -ած~ կատարած, առած [էջ 146բ] և այլն:

ե) Երբեմն բաղադրվող հիմքից սերված բառային բաղադրությունների շարքում երևան են գալիս բառակապակցական բաղադրություններ: Այսպիսի միավորները բառարանի մեջ ընդգրկելը խոսում է այն մասին, որ թվում է, թե տվյալ բառը բառակապակցությունից դուրս անկիրառելի է, հանդես է գալիս սոսկ որպես կայուն բառակապակցության բաղադրիչ: Մյուս կողմից նկատելի է, որ խախտվում է բուն սկզբունքը, քանի որ բառակազմական բա-

¹⁰ Հմմտ. Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 1197, ն. 19—22:

¹¹ Այստեղ սխալ է այդ բառը նշելը. այն բերվում է նաև իր իսկ տեղում՝ աճատուն բաղադրվող հիմքով կազմություններում (էջ 113 բ):

ռարանի մեջ ներմուծվում են բառակապակցություններ [մի բան, որ ավելի պատշաճում է, այսպես կոչված, բառակապակցական բառարանին]։ Դրանք սույն բառարանում այնքան էլ մեծ թիվ չեն կազմում, շատ սակավ են հանդիպում և ամենևին չեն անդրադառնում բառարանի ընդհանուր կառուցվածքի վրա։ Հմմտ. գիրքեր ~ գիրքերագնաց, գիրքերավարժ տֆնութին, գիրքերախառն [էջ 115բ], ման ~ մանահամբոյր պատմմաս, մանահաւէր թմրութին, մահահանգոյն և այլն [էջ 121բ], նոր ~ նորանշան սփանշելիք, նորակնունք և այլն [էջ 123ա], վարժ ~ ձրիավարժ, գիրքերավարժ տֆնութին, հմտավարժ, մանկավարժ և այլն [131բ], քայլ ~ սիգաքայլ երիվար, մեծաքայլ, հանդարտաքայլ [էջ 132ա], դէմ ~ մարդդդէմ գագան, այլադէմ և այլն [134ա], կիր ~ աստուածակիր, մարգարէակիր հոգի, շրակիր և այլն [էջ 136ա], նիշ ~ քառանիշ սայրասուր, խաչանիշ [էջ 136բ] և այլն։

զ) Բառարանում տեղ են գտել բառարանագրական անուշադրության դեպքեր։ Մեկ-երկու դեպքում տվյալ տառով դրված գլխաբառից սերելի բառերի հետ տեղ-տեղ բերվում են բոլորովին այլ բաղադրիչներով կազմություններ։ Հմմտ. պան ~ պահագգեստ, ջահագգեստ, ջանքեկալ, պուր ~ պրասուն, հեռոն ~ ջրասոյգ, ջրապուրպուր, այնուհետև՝ ջրանեղծ, ջրայոյգ, ջրաբքի, ջրադառն, ջրաբեր, ջրաբուխ, շրենեղեղ, ջրանոս [էջ 124], պստիկ ~ պստկապահանջ, հետո՝ սաստկագին, սաստկահողմն [ն. տ.]։ Մեկ այլ դեպքում բաց է թողնված գլխաբառի առաջին տառը, նույնը՝ կրկնված բաղադրյալ բառում՝ [ո]ամիկ ~ [ո]ամկածին [ն. տ.]¹²։

է) Վերը նշեցինք սույն բառակազմական բառարանի բառահոգվածի ընդհանուր կառուցվածքի մասին։ Այն առնչությամբ պարզ ձևակերպում ունի. բերվում է գլխաբառը և դրան հաջորդաբար թվարկվում են բաղադրված միավորները, ընդ որում վերջիններս գլխաբառից անջատվում են սոսկ միջակետով, իսկ թվարկվող բաղադրություններից առաջինը գրվում է գլխատառով, ինչպես և՛ գլխաբառը։ Այսուհանդերձ, բառարանում բաղադրվող հիմքից սերվող մի քանի բաղադրությունների դեպքում հեղինակը հարկ է համարում տալ համապատասխան լրացուցիչ բացատրություններ՝ կապված տվյալ կազմության բաղադրման կոնկրետ բնույթի, եղանակի հետ։ Այսպես, չափ-ից բաղադրված է հասակաչափ բարդությունը, որին կից բերվում են բառակապակցություններ, բացատրելով՝ «շարակցեալք, ոչ բարդեցեալք», և թվարկում՝ «չափ ~ ազով չափ, առնչափ [՝], մանու չափ, գոյի չափ, անձնաչափ» [էջ 130բ]¹³։ Այնուհետև, միտ ~ «մանկամիտ, որ է մանկախել» [էջ 136ա], մատոյց ~ «պատարագամատոյց, կարնամատոյց. ըստ այսմ և այլ անցողական բայից արմատք. մրգամատոյց, ցողամատոյց, սերմնամատոյց, սրբամատոյց, նամակամատոյց» [էջ 138ա], ուն ~ «զկայուն և զգայուն՝ ինչս, խրախանս առնէ. եռանդուն» [էջ 139բ] և այլն։

Առհասարակ բառակազմական բառարանի ստեղծման կարևորագույն հիմունքներ են բառակազմական հիմքերի ճիշտ ընտրությունը, հստակ ձևակերպումը և ստույգ գործածությունը։ Դրանից բացի, ժամանակակից բառարանագիտությունը նման տիպի բառարանի կազմման վերաբերյալ ներկայումս առանձնացնում է տեսական որոշակի դրույթներ ու սկզբունքներ։ Բառարանի հեղինակը գերազանցապես հանդես է բերում գործնական-բառարանագրական մոտեցում։ Դա պայմանավորված է ժամանակի բառարանագիտության ընդհանուր մակարդակով։ Այստեղ բառակազմական հիմքերի ընտրության, տեղաբաշխման և մեկնաբանման խնդիրները լուծվում են նախնական ձևով, ոչ երկարատև մշակմամբ։ Այս առումով հարկ ենք համարում ստորև նշել բառարանում տեղ գտած մի քանի մանրամասներ։

¹² Ռ-ի բացթողումը երևի թե պիտի բացատրել ձեռագրի գլխատառերը այլ՝ կարմիր թանաքով գրելու հանգամանքով. գլխատառերը հետո կարմիր թանաքով գրելիս գրելը, հավանաբար, տվյալ դեպքում վրիպել է։ Տե՛ս նաև էջ 144ա, ն. 1—2։

¹³ Բերվածներից առնչափ-ը և անձնաչափ-ը, այդուամենայնիվ, «բարդեցեալք» են։

¹⁴ Հմմտ. Н. А. Тихонов, Словообразовательный словарь русского языка, т. 1, М., 1985, с. 8—51։

Բառարանում բաղադրվող հիմք-գլխաբառերը հանդես են գալիս հայերենին առհասարակ բնորոշ գրեթե բոլոր կարգի բառակազմական հիմքերով: Իրանից բացի այն ներկայացնում է հայերենի բառակերտման միտումները, արտացոլում է հայոց լեզվի բառակազմական միջոցները և եղանակները: Ընդ որանով իսկ վավերացվում է վերջիններիս կենսունակությունը լեզվի գործառույթյան նոր պայմաններում: Մի կողմ թողնելով բառակազմական «մաքուր» հիմքերով բաղադրված բառերը, անդրադառնանք այստեղ երևան եկած մի քանի ձևավոր հիմքերով բաղադրություններին՝ կապված դրանց սերման օրինաչափությունների և առանձնահատկությունների, ինչպես նաև անհերքելի զանազանությամբ բացատրվող շեղումների հետ:

ա) Քանի որ բառարանը ավանդված է ձեռագիր վիճակում, ապա նրանում երևան են գալիս արտասանական տարբերակներ ներկայացնող հիմքեր. հանդարտ գլխաբառից սերված բառերից մեկում այն գործածված է հանտարա գրությամբ՝ հանտարտածայն [էջ 120ա]:

բ) Հնչյունափոխական տարբերակներ հանդիսացող հիմքեր. [հնչյունի անկում, փոփոխում և այլն]. երախտի ~ երախտամոռաց, երախտակոռուս [էջ 116բ], թերի ~ թերալից, թերակատար, թերահալատ, թերամիտ [էջ 117բ], պիղծ ~ պղծալուր, պղծաշուրթ [էջ 124բ], պսաիկ ~ պստկապահանջ [էջ 124բ], վերին ~ վերնագնաց ոգի, վերնաշու, վերնագալառ [էջ 125բ], տէր ~ տիրագիր, տիրամեծար [էջ 125բ] և այլն:

գ) Ձևաբանական տարբերակներ հանդիսացող հիմքեր. մեղք ~ մեղսափախ, մեղսակործան, մեղսասէր [էջ 122ա], սերմանիք ~ սերմանափառ, սերմանամտոյց [էջ 125ա], փառք ~ մեծափառք, հրաշափառ, գերափառ, վեհափառ, սեփառ, բարեփառ [էջ 123ա] և այլն:

դ) Գործառական տարբերակներ հանդիսացող հիմքեր. հայրեն ~ հայրենապետ, հայրենատու, հայրասպան, հայրախոյստ, հայրագեղծ, հայրաբույս, հայրասէր [էջ 120բ], գիր կամ գիծ ~ գեղեցկագիր, արագագիր, ասուածագիծ, անպարագիր և այլն [էջ 135ա], հոգի ~ հոգեշունչ, հոգեկից, ոգեպահանջ [էջ 120բ] և այլն:

Այնուհետև, հարկ է նշել, որ բառարանում բառակազմական հիմքերի գործադրման հարցում նկատելի են դուլզն ինչ վրիպումներ և անճշտություններ: Այսպես, ունենք չրն [փխ. չին] ~ չնաշխարհիկ [էջ 124ա], չրք [փխ. չիք] ~ չքմեղիկ [ն. տ.]: Վրիպումներ են նաև հետևյալները՝ պեղծ ~ պղրծապատ, պղնծսմիք [էջ 124ա], հարցա- [փխ. հարց] ~ հարցափորձ, հարցաբան [էջ 120ա]. և այլն: Պատճառական սեռի - ոյց մասնիկը դիտվում է ածանց և գրվում իբրև գլխաբառ-բաղադրվող հիմք - ոյց ~ սառոյց, դառնարոյց, ասմատոյց, փափկասնոյց, նաւկառոյց [էջ 143բ]: Ածանցման տեսակետից սխալ կազմություններ են նաև հետևյալ տիպի բաղադրությունները. -ակ ~ անգակ [էջ 140բ], -բայ ~ երկբայ, խաբբայ [էջ 141ա], -բղէտ ~ խայտաբղէտ [էջ 142ա], -ին ~ երկիւղագին [էջ 141ա], -անի ~ գովանի, բայց՝ ձմերայնի, սփանջանայի [էջ 142ա] և այլն¹⁵:

Ուշագրավ է նաև այն հարցը, թե այս կամ այն բաղադրվող հիմքով սերված բաղադրությունները հայոց լեզվի բառապաշարի պատմության տեսակետից առհասարակ ինչպիսի արժեք ունեն:

Բառարանում տեղ գտած բաղադրյալ բառերը գրեթե գերազանցապես սերված են բնիկ հայերեն բառերի և ածանցների հիման վրա: Այս առումով թերևս միակ բացառությունը մի քանի փոխառյալ անուններն են, որոնք դիտվում են իբրև -անոս, -ոս, ածանցական հիմքերով բաղադրություններ: Նման բառերը նոր չեն, այլ ավանդված են վաղուց. -անոս ~ Հերոդիանոս, արիանոս [էջ 143ա], -ոս ~ Տիտոս, կաթողիկոս, գղերիկոս [էջ 144ա]:

Բաղադրյալ բառերը մեծ մասամբ գործածվել են հին գրական հայերենում, հանդես գալով իբրև նրա բառապաշարի լայն, կենսունակ շերտի միավորներ: Դա հիմնավորվում է ոչ միայն առաջին իսկ հայացքից, այլև նրա-

¹⁵ Այստեղ, անշուշտ, կան գրագրական վրիպումներ, որոնք այլ գրագիր օրինակ ձեռքի տակ չունենալու պատճառով, ցավոք, հնարավոր չէ իրապես ճշգրտել:

նով, որ դրանք բառարանագրված են, ասենք, հին գրական հայերենի բառապաշարը ամփոփող «նոր բառգիրք հայկազեան լեզուի» [այսուհետև՝ ՆՀԲ] երկհատոր աշխատության մեջ: Բառակազմական բառարանում ավանդաբար հայտնի բաղադրյալ բառերից բացի հանդիպում են նաև այնպիսի բառեր, որոնք չենք գտնում, օրինակ, ՆՀԲ-ում: Դրանք ամենայն հավանականությամբ հետագա կազմություններ են, երևան են գալիս ուշ շրջանում և բնականաբար, դուրս են մնացել ՆՀԲ-ից: Ըստ այդմ, սույն բառարանը ստանում է հայերենի բառապաշարի պատմական ուսումնասիրության աղբյուրի արժեք:

Բավական հետաքրքիր է բառարանում բերված բառերը ժամանակագրական տեսանկյունից քննելը. դա կարող է առանձին ուշադրության առարկա լինել: Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ բառերի տարբեր մասերի մի քանի բառահոգվածներում ամփոփված բառերին: Այսպես, անձն բաղադրվող հիմքով բերվում են 11 բաղադրյալ բառեր, որոնք կան ՆՀԲ-ում: Արդար-ից բաղադրված 7 բառերից վերջին երեքը՝ արդարապատիժ, արդարա-հաս, արդարավեհ, չկան ՆՀԲ-ում: Արժան-ից սերված է 5 բառ ՆՀԲ-ն չունի՝ արժանամյոյ, արժանամասոյ: Աղիւս-ից նշվում է երկու կազմություն, 1-ր չունի ՆՀԲ-ն՝ աղիւսարկու¹⁶: Այսպես նաև՝ մարգարէ ~ մարգարէագիծ [4-ից 1-ը], մարդ ~ մարդադրամե, ևս 2-ը՝ իբրև անկախ բառ¹⁷ մարդակոյտ, մարդապուր, զգեստ ~ արեգակնազգեստ, իսկ աղփատազգեստ-ի փոխարեն ՆՀԲ-ն ունի աղփատազգեստեալ, սև ~ հակակասէր [12-ից 1-ը], դիր ~ ազագիր, բանադիր¹⁸, կարգադիր¹⁹ [13-ից 1-ը] և այլն: Ածանցավոր բառերը համեմատաբար հայտնի բաղադրություններ են, դրանք բառահոգվածներում քիչ-քիչ են թվարկվում և, դրա հետ կապված՝ բառարանագիրը ներկայացնում է սովորական կազմությունները, ավելի հեշտ հիշվող բառերը: Այսպես, —աւոր հիմքով նշված 27 բաղադրություններից ՆՀԲ-ն չունի միայն մեկը՝ շփաւոր բառը:

Այսպիսով՝ բառարանում տեղ գտած, բառապաշարի յուրահատկություններին վերաբերող սակավաթիվ փաստերը ևս ցույց են տալիս, թե որքան մեծ արժեք ու նշանակություն ունի հայերեն ամեն մի գրավոր հուշարձան, եթե այն ամբողջովին դիտվի իբրև աղբյուր՝ հայոց լեզվի պատմական բառարանի ստեղծման ճանապարհին:

Ընդհանուր առմամբ ի՞նչ արժեք ունի սույն բառակազմական բառարանը և նրա հեղինակը տվյալ դեպքում ի՞նչ նպատակ է հետապնդել:

Իր բնույթով բառարանը բառակազմական է, որտեղ բառահոգվածները կառուցված են ելակետային գլխաբառերից բառային նոր բաղադրություններ սերելու սկզբունքով: Նման տիպի բառարանի գոյությունը ավելի քան երկու հարյուր տարի առաջ, որքան հայտնի է մեզ առհասարակ և որքանով հնարավոր է պարզել հայ բառարանագրության պատմությանը նվիրված աշխատություններից և կողմնակի աղբյուրներից, միանգամայն աննախադեպ իրողություն է: Այդ բառարանն այսօր արժեքավոր է ամենից առաջ հենց այդ տեսակետից: Չափազանցություն չի լինի ասել, որ այն հայ բառարանագրության մեծ ինքնատիպ երևույթ է: Ուստի և պարզ է, որ բառարանը առանձին դիրք է բռնում հայերեն տարբեր տիպի և բնույթի բառարանների շարքում, թեև այն ամենևին պատկանազդու չէ իր ժամալով [ընդամենը 66 էջ], նույնիսկ չի զարմացնում բառարանագրական հմտության և հստակ կառուցվածքի տեսակետից:

Իսկ այն հարցը, թե ինչ նպատակ է հետապնդել սույն բառարանը, բավական ուշադրով է հատկապես ժամանակի գրարար հայերենի մշակման և կատարելագործման, ինչպես նաև նրա գործնական ուսուցման տեսակետից: XVIII դարը, ինչպես գիտենք, զարգացման առումով սերտորեն առնչվում է

¹⁶ ՆՀԲ-ն ունի աղիւսարկ, աղիւսարկութիւն:

¹⁷ ՆՀԲ-ում մարգարէութեւ-ը և մարգարէութեւ-ը բերվում են միայն բառակապակցության մեջ՝ մարգարէութեւ բաղադրութիւն, մարգարէութեւ լինել՝ փախչել:

¹⁸ ՆՀԲ-ն ունի՝ բանազրեմ, բանազրեմ, բանազրութիւն:

¹⁹ ՆՀԲ-ն ունի՝ կարգազրեմ, կարգազրութիւն:

նախորդ դարին, երբ շրջադարձային հունի մեջ են դրվում հայ մշակույթի նորովի ուսումնասիրումը և մեր իրականության մտավոր առաջընթացը: Ընդհանուր վերելքի պայմաններում կարևոր էր նոր գրական լեզվի խնդրի լուծումը: Հայտնի է, որ XVIII դարում հայերենը դործառում էր գրական երկու տարբերակով՝ գրաբարով և գրական աշխարհաբարով, ըստ որում գրաբարի գրավոր գործառության ոլորտները ավելի լայն էին, քան գրական աշխարհաբարինը: Այդ շրջանում, օրինակ, գրաբար գրքերը, պարբերական մամուլը մի քանի անգամ գերազանցում էին գրական աշխարհաբարով ստեղծվածներին: Հետագայում է, որ գրական աշխարհաբարը, առարկայական հանգամանքների պայմաններում, գործառնապես ավելի է առաջադիմում և XIX դարի երկրորդ կեսից ի վեր դառնում է միահեծան գրական լեզու, անընդհատ կատարելագործվելով ինքնուրույնաբար և ի հաշիվ գրաբարի արժեքավոր, նպաստավոր իրակույթյունների:

Նման պայմաններում, ահա, գրաբարի կողմնակիցները իրենց բոլոր ջանքերը ի սպաս են դնում նախ գրաբարի ներսում տեղ գտած օտար ազդեցության՝ լատինաբանության հաղթահարմանը [XVIII դարի սկզբներից մինչև 80-ական թվականները], հետո, ի հակադրություն ժամանակի աշխարհաբարի, գրաբարի ինքնուրույն մշակմանը և կատարելագործմանը [XVIII դարի 80-ական թվականներից մինչև XIX դարի 60-ական թվականների սկիզբը], այնուհետև՝ գրաբարի գրական աշխարհաբարի մեջ ներմուծելուն [XIX դարի 60-ական թվականներից ի վեր]: Այս տեսակետից, կարծում ենք, որ սույն բառակազմական բառարանը ստեղծված պիտի լինի XVIII դարի կեսերից մինչև դարի վերջերն ընկած ժամանակում, որովհետև այն ամբողջովին կոչված է նպաստելու գրաբարի բառապաշարի նորմատիվ յուրացմանն ու առօրյա գործածությանը: Սա է հիշյալ բառարանի ստեղծման բուն նպատակը: Եվ այդ նպատակով հեղինակը դիմել է բավական յուրօրինակ միջոցի, հորինել գրաբարի բառապաշարի ուսուցումը առաջ տանելու գործին ծառայող՝ ձևով ինքնատիպ և օգտագործման առումով մատչելի մի առձեռն բառարան: Բառահոգվածների կառուցման բառակազմական սկզբունքը, գրաբարի բառակազմական միջոցների և եղանակների հիման վրա բառարանում առանձին մասերի առանձնացումը, գրաբարի բառապաշարի հայտնի, նախկինում ավանդված, խնչպես նաև նոր շրջանում կազմված բառերի մասնակի օգտագործումը այն արմատական հանգամանքներն են, որոնք հաստատում են, որ բառարանը լիովին կոչված է եղել ծառայելու գրաբարի բառապաշարի գործնական ուսուցման նպատակին:

РУКОПИСНЫЙ СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЙ СЛОВАРЬ АРМЯНСКОГО ЯЗЫКА

ВАЗГЕН АМБАРЦУМЯН

Резюме

Рукопись № 3110 Матенадарана им. Маштоца в числе других сочинений содержит оригинальный словарь на грабаре. До сих пор о нем имелись лишь сведения филолого-библиологического характера. Лингвистический и лексикографический анализ выявляет сущность, структуру и цель составления словаря. Он является словообразовательным словарем, имеющим деривационную структуру, и был создан в целях изучения и освоения лексики грабара, функционирующего в качестве литературного языка в XVIII в.